

# ԷԶԵՐ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

## Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ի Ց

ԴՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՂԱԲԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐԸ ԵՒ ՊԱՏՄԻՉՆԵՐԸ  
ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ ԵՒ ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ — «ԶՈՒԱՐԹՆՈՑ» ՅՈՒ-  
ՇԱՐՁԱՆԸ — ԻՐԴ ԴԱՐԻ ՊԱՏԿԵՐԸ — ՊԱՏՄԻՉՆԵՐՆԵ ՈՒ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԸ  
ՍԵԼՋՈՒԿ-ԹԱԹԱՐՆԵՐԻ ԱԵՐԱՇՈՒԹԻՒՆԵՐԸ

### ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

#### Ա

Դրդ Դար: Դա Հայ ժողովրդի քաղաքական-հասարակական ու տնտեսական կեանքի ամենամուսյլ մի ժամանակաշրջանն է:

Այդ պատմաշրջանում, 640ական թուականին, արարական զօրքերը մտնում են Հայաստան եւ իրենց երեքհարիւրամեայ տիրապետութեան ժամանակ ամենաժանր հարկերով, բռնութիւններով, աքաղանքով ու կողոպուտներով տանջում ու հալածում Հայ ժողովրդին:

Քաղաքական ու տնտեսական ծանր ճնշումներն աւելի դժբախտացնում են մանաւանդ աշխատաւոր ժողովրդին: Այդ մասին վկայում են նաեւ Դրդ Դարի Հայ պատմիչները, որոնց պատմական վաստակների շնորհիւ այսօր դադափար ենք կազմում Հայաստանի եւ Հայ ժողովրդի անցեալի քաղաքական կեանքի պատմութեան, ինչպէս նաեւ օտար բռնակալ գերշխողների աւերածութիւնների ու կոտորածների մասին:

Այդ պատմիչները, մեծ մասամբ, իրենց նկարագրած դէպքերին ու անցքերին ժամանակակից կամ ականատես լինելով՝ ճշգույթամբ արձանագրել են դարաշրջանի իրադարձութիւնները: Այդ տեսակէտից նրանց պատմութիւնները թանկագին աղբիւրներ են եւ մեծ արժէք ունեն:

Այստեղ սեղմ գծերով պատկերենք նրանց պայծառ կերպարները:

#### 1

### Ս Ե Ր Է Ո Ս

Դրդ Դարի առաջին կիսում հռչակ է վայելում վաստակաւոր պատմիչ Սերէոսը, որի պատմութեան ճակատին կարգում ենք. «Սերէոսի Եպիսկոպոսի պատմութիւն»:

Նրա մասին կենսագրական հարուստ տեղեկութիւններ չկան: Այսքան միայն յայտնի է, որ նա եղել է բարձրագոյն կրթութեամբ ու պատմագրական ձիրքով օժտուած եւ ժամանակի լուսաւոր գաղափարներով տողորուած մի հողեւորական. մասնակցել է 645 թուականին Դուինում գումարուած ժողովին եւ, ինչպէս ինքն է արձանագրել, եղել է պարսից Սոսրով թագաւորի պալատում:

Ի՞նչ են պատմում, սակայն, նրա պատմութեան հիմնական տողերը:

Նա իր պատմութիւնն սկսում է Աղամից, Նոյից եւ Հայկից: Բայց նրա պատմութեան զլխաւոր առանցքը կազմում են Սասանեան պետութեան

անկումը, Արարների զօրեղանալը եւ նրանց վայրենի արշաւանքներն ու նւրաճումները Պարսկաստանում, Յունաստանում եւ Հայաստանում : Այդ տեսակէտից նրա պատմութեան բովանդակութիւնն առանձին արժէք է ներկայացնում : Առ հասարակ, ուրիշ ցանկանում են արարական տիրապետութեան շրջանում Հայ ժողովրդի վրայ դրուած ծանր հարկերի, նրա տանջանքների ու հալածանքների, հերոսական պայքարի, հայրենասիրական անձնուէր դործունէութեան, ինչպէս նաեւ օտար բռնակալ իշխողների դէմ տարած փայլուն յաղթանակների մասին ցայտուն գաղափար մը կազմել, նրանք պէտք է կարգան եւ ուսումնասիրեն Սերէոսի պատմութիւնը, ուր, բացի պատմական դէպքերից, կան նաեւ գրոյցներ Մուշեղ Մամիկոնեանի եւ Սմբատ Բազրատունու հայրենասիրական անձնուէր դործունէութեան մասին :

## 2

## ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Մեր Դարի Հայ պատմագրութեան մէջ մի բացառիկ դէմք է Յովհան Մամիկոնեանը, որ Հայ ժողովրդին աւանդ է թողել «Տարօնի Պատմութիւն»ը, որ իր հիմնական բովանդակութեամբ պատկերում է Հայ ժողովրդի հերոսական պայքարը Սասանեան բռնութիւնների ու ճնշումների դէմ :

Պատմութիւնն ուշադրաւ է նրանով, որ այնտեղ Մեր Դարի պատմական դէպքերն ու դէմքերը դժուած են ժողովրդական ստեղծագործութեան վրայ եւ հիմնականում նոյն դարի Հայ-Սասանեան պատերազմներին նւրբերուած եւ պարզ ու յստակ լեզուով շարադրուած մի թանկագին աղբիւր է, ուր ցոյանում է ջերմ ու խորունկ հայրենասէր եւ հմուտ ռազմապէտ Վահան Մամիկոնեանի պայծառ կերպարը, որ օժտուած լինելով ռազմավարական բացառիկ ձիրքով՝ Սասանեանների դէմ մղուող մարտերում իր հերոսական քաջութիւններով եւ փայլուն յաղթանակներով մեծ հռչակ է փայլում :

Նշենք, սակայն, որ Մանուկ Աբեղեանը «Տարօնի Պատմութեան» հեղինակ է համարում Ձենոր Գլաղը, իսկ Հայ բանասիրական գրականութիւնը չի ընդունում նրա տեսակէտը : Սակայն, պատմաբան Աշոտ Աբրահամեանը բազմաթիւ ձեռագրերի համեմատութեամբ ընդդժել է, թէ պատմութեան հեղինակն է Յովհան Մամիկոնեանը :

Ինչո՞ւմն է կայանում, սակայն, Յովհանի պատմութեան արժանիքը :

Իր ամբողջական բովանդակութեամբ պատմութիւնն ունի մի քանի էական առանձնայատկութիւններ .

1. Այն, որ դա Մեր Դարի Հայ-Սասանեան պատերազմների մասին ժողովրդական լեզուով շարադրուած մի հերոսապատում է :

2. Այնտեղ ժողովրդական աւանդութիւններն ու գրոյցները առանձին փայլ ու երանդ են տալիս պատմութեան բովանդակութեանը :

3. Հիմնական նիւթն անդրադառնում է պատմական այն դէպքերի ու դէմքերի շուրջ, որոնք ասպարէզ են եկել Մեր Դարի Հայ-Սասանեան պատերազմների ժամանակ :

4. Պատմութեան առանցքն են կազմում Մամիկոնեանները, որոնք ռազմամարտերում փայլում են ո՛չ միայն իրենց քաջութիւններով, ռազմավարական հմտութեամբ, այլեւ իրենց իմաստութեամբ ու հնարազիտութեամբ :

ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՅԻ

Դրդ Դարի պատմագրութեան մէջ պատուաւոր տեղ է գրաւում Մովսէս Կաղանկատուացին, որի մասին, դժբախտաբար, չունենք կենսագրական հարուստ տեղեկութիւններ: Այսքան միայն յայտնի է որ նա Հայաստանի Ուտի գաւառի Կաղանկատուք գիւղից է եղել:

Նրա աւանդ թողած պատմութեան էական մասը չորրորդ դուիսն է, ուր նա հմուտ գրչով նկարագրել է Աղուանից աշխարհի եւ աղուանական ժողովրդի պատմութիւնը: Այդ տեսակէտից նրա պատմութիւնը իր հիմնական բովանդակութեամբ, մի եզակի աշխատութիւն է եւ մեծ արժէք է ներկայացնում:

Բանասիրական գրականութեան տուեալների համաձայն՝ Աղուանները մինչեւ 4րդ Դարը բնակուել են Կովկասեան լեռների վրայ, ապա անցնելով Կուր գետը, հաստատուել են Հայաստանի Ուտի, Փայտակարան եւ Արցախ նահանգներում, ուր նրանք իրենց անկախութիւնն ու ազատութիւնը պահպանել են մինչեւ 13րդ Դարը:

Ուշագրաւ է այն, որ նրանք Գրիգոր Լուսաւորչի քարոզութիւնով ընդունել են քրիստոնէութիւնը, իսկ Ս. Մեսրոպը նրանց համար եւս հնարել է տառեր:

Մովսէսի պատմութեան բովանդակութիւնը խորացնում են նաև ժամանակակից Աղուանների իշխան եւ կառավարիչ՝ Զրանշիրի մասին արձանագրած մանրամասն տեղեկութիւնները: Նա մէկն է այն իշխաններից, որ իր գիւանագիտական հմտութեամբ եւ վարչական ընդունակութեամբ կարողանում է արևելիկան հզոր պետութիւնների՝ Յոյների, Պարսիկների, Պաղարների եւ Արար գերիշտոյնների համակրանքը սիրաշահել եւ իր երկիրը խաղաղութեամբ բարեկուսել: Սակայն վերջում դաւադրութեամբ սղանում է:

Կաղանկատուացու պատմութեան մէջ ուշագրութեան արժանի են Հոների ու Պաղբի կեանքի, սոփորութիւնների եւ բարքերի մասին ընդունում նկարագրութիւնները, որոնք ազգագրական նշանակութիւն ունեն եւ նրա պատմութեան բովանդակութեանն առանձին վայլ ու զրաւչութիւն են տալիս:

Մատենագրի պատմութեան մի այլ կարեւոր մասը Ռուս ժողովրդի արշաւանքն է Աղուանից աշխարհի վրայ:

Ղ Ե Ի Ո Ն Դ Ե Ր Է Յ

Հայ ժողովրդի պատմութեան համար Ղեւոնդ Երէջի վաստակն ուշագրաւ է եւ մեծ արժէք ունի նրանով՝ որ պատկերում է արարական տիրապետութեան շրջանում Հայաստանում տեղի ունեցած ծանր իրադարձութիւնները, խալիֆաթի սոսկալի բռնութիւնները, հալածանքները եւ բարբարոսութիւնները: Պատմագիրն ընդարձակօրէն պատմում է քաղաքական բոլոր անցքերն այն օրուանից, երբ Մուսլիէ ամիրապետն իր զահը փոխադրում է Դամասկոս եւ 661 թուին գրաւում Հայաստանը:

Ղեւոնդը խոր յուզումով ու կակիծով նկարագրում է Հայ ժողովրդի մասսայական գերեզմարութեան եւ Հայ նախարարներին՝ նախիջևեանի եկեղեցում կենդանի այրելու զարհուրելի ու սոսկալի տեսարանները :

Պատմութեան էջերում կարեւոր փաստական աղբիւրներ են նաեւ արարական գերիշխողների նշանակած ծանր հարկերի, նրանց կողոպուտների ու Հայ ժողովրդին պատճառած տանջանքների նկարագրութիւնները :

Արար հարկահանների դաժան քաղաքականութեան պատկերը Ղեւոնդ պատմաբանն արձանագրել է այսպէս. «Ռամիկ մարդկանց բազմութեանը խոչտանգում էին դանազան տեսակի հարուածներով, հարկապահանջութեան համար ոմանց դառնապէս լլկում էին փոկահարութեամբ, ոմանց մերկացնելով խիստ ձմեռային օրերին պղծում էին լճերի մէջ եւ նրանց վրայ նշանակում էին պահապաններ, որ շարշարեն նրանց եւ այնպիսի շարալլուկ շարշարանքներով տանջում էին նրանց կեանքը, որ չենք կարող պատմել աղէտալի պատմութիւնը» :

Պատմութեան հիմնական մասն են կազմում նաեւ Յոյների, Սաղարների յարձակումները Հայաստանի վրայ եւ Հայ ժողովրդի ապստամբական շարժման նկարագրութիւնը : Այդ տեսակէտից պատմութիւնը մեծ կարեւորութիւն ունի ո՛չ միայն Հայ ժողովրդի, այլեւ Դրդ Դարի ընթացքում այլ ազգերի կեանքում տեղի ունեցած անցքերի ուսումնասիրութեան համար :


\* \* \*

Այժմ տեսնենք, թէ Արարների քաղաքական ու անտեսական անասելի ճնշումների ու հալածանքների շրջանում ի՞նչ պատկեր էին ներկայացնում Հայ մշակոյթին ու արուեստները :

Չնայած Դրդ Դարի քաղաքական ծանր ու մռայլ դրութեան՝ մշակութային ու գեղարուեստական շարժումն ո՛չ միայն կանգ չի առնում, այլ ընդհակառակն՝ նոյն ժամանակաշրջանի ամենանշանակալից մի այլ երեւոյթը, պատմադրութեան զարգացման հետ, դիտութեան նուաճումն է, որի ամենափայլուն ներկայացուցիչն է առաջնակարգ դիտնական Անանիա Շիրակացին, որ իր դարաշրջանում հռչակում է որպէս պատմաբան, աշխարհագրագէտ, մաթեմատիկոս, աստղագէտ, տոմարագէտ եւ որ իր դիտական լուրջ ուսումնասիրութիւններով բարձր պատուանդանի վրայ է դնում հայկական դիտութիւնների մշակոյթը :

Դրդ Դարում առանձին փայլ է ստանում եւ ծագում նաեւ բանաստեղծական գրականութիւնը, որի տաղանդաւոր ու պայծառ գէճքն է գրական փայլուն ձիրքով օժտուած Դաւիթ Քերթոզը, որ Հայ ժողովրդին աւանդ է թողել Աղուանից Զիւանչիւր իշխանի շարանենդ սպանութեան մասին մի պոէմ, որ հնադոյն շրջանի Հայ գեղարուեստական աշխարհիկ գրականութեան լուսադոյն ստեղծագործութիւններից մէկն է :

Դրդ Դարի Հայ գեղարուեստական շարժման պատմութեան մէջ պատուաւոր տեղ են գրւում նաեւ Հայ երաժշտական արուեստի պարծանքը հանդիսացող երաժիշտները, որոնցից յիշատակենք Սահակ Զորափոքրիցի՝ ժամանակի Հայոց կաթողիկոսը, եւ Յովհան Օձնեցի, որոնք իրենց յօրինած նորանոր երգերով ու շարականներով հարստացնում են ժամանակի Հայ երաժշտական մշակոյթի դանձարանը :



Զ Ո Ի Ա Ր Թ Ն Ո Ց

Վերակազմում՝ Թորոս Թորամանեանի

Սակայն, Երգ Դարի Հայ գեղարուեստի պատմութեան մէջ իր առանձնաշատուկ տեղն ունեն ճարտարապետական արուեստի հոյակապ յուշարձաններն ու կոթողները, որոնք նշանակալից նուաճումներ են անում եւ հասնում զարգացման բարձր կատարելութեան: Եւ այդ՝ շնորհիւ փայլուն ձիրքով օժտուած տաղանդաւոր եւ առաջնակարգ ճարտարապետների, որոնց կերտած գեղարարչ յուշարձանները ճարտարապետական արուեստի տարբեր գեղեցկութիւններ են եւ իրենց խորհրդաւոր լուսութեամբ վկայում են հնագոյն շրջանի ճարտարապետների բացառիկ վարպետութեան եւ նրանց ինքնատիպ արուեստի խորութեան, նրբութեան ու վեհութեան մասին: Այդ տեսակէտից Երգ Դարի Հայ ճարտարապետական մշակոյթի գլուխ-գործոյններ են Հռիփսիմէի, Մրենի, Թալինի, Արուծի, Թալիշի տաճարները, որոնց շարքում արուեստի նոր տիպի թանկագին եւ հրաշակերտ մի կոթող է Զուարթնոցը, որի գեղեցկութեանն առանձին փայլ են տալիս ճարտարապետական ինքնատիպ նոր ոճն ու կառուցողական նոր ձեւերը:

Ընդգծենք սակայն մի կարեւոր հանգամանք: Հայ ժողովրդին պատիւ բերող եւ նրա պարծանքը հանդիսացող Երգ Դարի տաղանդաւոր ճարտարապետների կեանքի էական հանգամանքների, նրանց գեղարուեստական գործունէութեան եւ կերտած հոյակապ կոթողների մասին չկան փաստական հարուստ տեղեկութիւններ:

Այստեղ գծենք մեզ յայտնի տաղանդաւոր մի ճարտարապետի դիմանկարը:

## Բ

### ՅՈՂԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԵՒ ԶՈՒԱՐԹՆՈՅ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ

4-Երգ Դարիի հայկական ճարտարապետութեան հոյակերտ յուշարձանների մէջ իշխում է մի նոր տիպի թանկագին կոթող: Դա Զուարթնոցն է, որ իր ինքնուրոյն կառուցուածքով, իր նոր ոճով ու ձեւերով եւ իր կախարդական ու գրաւիչ գեղեցկութեամբ Հայ ճարտարապետական մշակոյթի պատմութեան մէջ պատուաւոր տեղ է գրաւում:

Տաճարի վեհութեանն առանձին փայլ են տալիս ո՛չ միայն ճարտարապետական արուեստի նոր ոճը եւ կիսաշրջանաձեւ դասաւորուած սիւնաշարքերը, այլ եւ նուան, խողովի քանդակների նկարները, թեւատարած արձիւներ պատկերող բարձրաքանդակ խոյակները եւ այլ մօտիւններ, որոնք ցայտուն դադափար են տալիս Երգ Դարի Հայութեան պարծանքը հանդիսացող վարպետ քարտաշների, հմուտ քանդակագործների եւ մեծատաղանգ ճարտարապետ Յոհանի շինարարական ու քանդակագործական բարձր արուեստի եւ գեղարուեստական նուրբ ճաշակի մասին. մի հրաշակերտ եւ հազուադիւր տաճար, որն արժանացել է Հայ եւ օտար առաջնակարգ ճարտարապետների ու գիտնական արուեստագէտների բարձր գնահատութեանը, եւ համարւում է հայկական հնագոյն ճարտարապետական ստեղծագործութեան գոհարը:

Հայ ճարտարապետութեան այս հոյակապ կոթողը մինչեւ 20րդ Դարի սկիզբը մնացել է անյայտութեան մէջ. նրա առաջին յայտնաբերման պատիւը պատկանում է մի արուեստասէր հոգեւորականի: Դա էլմիաձնի միաբան Սաչիկ Վրդ. Դադեանն է, որ դեռ 1901 թուականին, շնորհիւ իր հնագիտական հմտութեան, սրատես ու թափանցող աչքերով տեսնում է հաստ

հողաչերտերով ծածկուած տաճարի ակերակներէ մնացորդները եւ նախաձեռնում է պեղումներ կատարել: Այնուհետեւ, 1904 թուականից սկսած, պեղումներին իր ջերմ մասնակցութիւնը բերում է տաղանդաւոր ճարտարապետ Թորոս Թորամանեանը, որով յայտնաբերւում են տաճարի մնացորդները:

Պատմական տեղեկութիւններէ համաձայն՝ տաճարը կառուցուել է Էջմիածնի մօտ, Ներսէս Գ Տայեցի կաթողիկոսի (641 – 661) կողմից, որ իր շինարարական փայլուն գործունէութեամբ հռչակուել է «Շինող» մականունով:

Չուարթնոցի մասին ուշագրաւ տեղեկութիւն է տալիս Դրդ Դարի ստուգապատում մի պատմագիր: Դա Մովսէս Կաղանկատուացին է, Աղուան ազգի լուսագոյն մատենագիրը. նրա վկայութեամբ՝ Չուարթնոց տաճարի օձման արարողութիւնը կատարւում է փառահեղ հանդէսով, որին մասնակցում է նաեւ, քաղաքական հանգամանքով, 652 թուականին, Հայաստանում գրաւուող Բիւզանդիոնի Կոստանդին Գ կայսրը. նա տաճարի ճարտարապետական նոր ոճի գեղեցկութեամբ այնքան է հիանում, որ ցանկանում է իր մայրաքաղաքում եւս նման մի հոյակապ տաճար կառուցել, բայց նրա ծրագիրը չի իրագործուում, որովհետեւ Հայ ճարտարապետը ճանապարհին մխսճանում է:

Պատմիչի այս արժէքաւոր տեղեկութիւնը հաստատում է մի կարեւոր հանգամանք, որ Չուարթնոցն ո՛չ թէ Բիւզանդական ծագում ունի, այլ տեղական տիպի մի տաճար է, որի նման հինգ յուշարձաններ յայտնաբերուելն են նաեւ Անդրկովկասում (վ. Յարութիւնեան, Էջմիածին, 1969):

Չուարթնոց տաճարի յատկազիծը եւ վերակազմութեան նկարը պատրաստել է Հայ ճարտարապետութեան առաջնակարգ գիտնական Թորոս Թորամանեանը, որ տաճարի մասին գրել է այսպիսի ուշամբաւ տողեր. «Չուարթնոց եկեղեցին Դրդ Դարու Հայոց ճարտարապետութեան գլուխ գործոցն է եւ անհամեմատ մեծ արուեստագիտութեամբ փորագրուած են բոլոր քանդակները ... Կայ ճարտարապետական այնպիսի մեծութիւն մը եւ արուեստագիտական այնպիսի հմտութիւն, որ համաշխարհային ճարտարապետութեան մէջ հազուադիւր օրինակ եւ պսակ է Հայու ստեղծագործական տաղանդին»:

Գիտնական Նիկողայոս Մառը եւս բարձր է գնահատել Չուարթնոց տաճարը եւ մեծ նշանակութիւն է տուել յուշարձանի ճարտարապետական յօրինուածքին եւ նրա կառուցողական ձեւերի առանձնայատկութիւններին՝ հայկական ճարտարապետական մշակոյթի պատմութեան մէջ: Ահա՛ նրա բերորոշ տողերը. «Դրդ Դարում կաթողիկոս Ներսէսի կողմից Էջմիածնի մօտ կառուցուած իւրայատուկ ձեւի կլոր, եռալարկ տաճարը, բոս մասնադէտներէ կարծիքի թէ՛ իր յօրինուածքով, թէ՛ ըստ իր կոնստրուկտիւ ձեւերով համահասարք չունի քրիստոնէական ճարտարապետութեան մէջ առ հասարակ: Մեզ համար առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում ո՛չ թէ այս գործի անվիճելի գեղարուեստական արժանիքները, այլ տեխնիկան»:

Չուարթնոց տաճարի կառուցողական արուեստի մասին «Հայ Ժողովրդի Պատմութիւն» խորագրով գրքում կարգում ենք նաեւ հետեւեալը. «Դա կլոր յատակազմով, գրսից եռալարկ երեւացող, ներսից սիւնաշարքով կազմուած կիսաշրջան խորաններով, շատ բարձր եւ լայնանիստ բրգածեւ շէնք է, որի բարձր մոյթ (նեցուկ, յենակ սիւնակ) սիւները իրենց գեղաքանդակ խոյակներով կրել են դժբէթը: Շէնքը ներսից զարդարուած է եղել մոզաիկ ներկարներով, իսկ գրսից ճոխ քանդակներով: Չուարթնոցը 4-7րդ Դարի Հայ-

կական ճարտարապետութեան գլուխ-գործոցն է եւ առ հասարակ ճարտարապետական հրահանգներուց մէկը» :

Զուարթնոցի պատկերը գծել է նաեւ ճարտարապետ Վ. Մ. Յարութիւնեանը, որի արձանագրութիւնից առաջ բերենք հետեւեալը. «Առաջին յարկի իւրաքանչիւր կողմը յարդարուած էր զոյգ կիսասիւնների վրա յենուող գէկորատիւ ու խորը արձատաւորուած կամարաղեղներով : Սրանց բազմազան տարբերակներում հարթաքանդակների հիմնական մօտիւր խաղողի ողկոյնն ու տերեւն է, ինչպէս եւ նոան ճիւղը : Կամարամիջոցները եւ նրանցից բարձր գտնուող հարթութիւնները ծածկուած էին նոան պողի ու ճիւղերի բարձրաքանդակներով : Կամարամիջոցներում տեղ են գտել նաեւ տաճարի կառուցողների բարձրաքանդակները՝ շինարարական գործիքները ձեռքերին : Դրանցից մէկի վրայ պահպանուել է «Յոհան» հայատառ մակագրութիւնը, որը, ենթադրուած է տաճարի գլխաւոր ճարտարապետն է եղել ... Զուարթնոցը ոչ միայն հայկական, այլեւ համաշխարհային ճարտարապետութեան ուշադրաւ յուշարձաններից է ու զղալի ազդեցութիւն է ունեցել Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս : Դրդ Դարի երկրորդ կէսին կառուցուած հայկական որոշ յուշարձաններ (Քալինի ու Քալիչի, Եզգիարդի Զօրավար եւ Արթիկի Մեծ եկեղեցիները), շնայած իրենց յօրինուած քային տարբերութեանը, կրում են Զուարթնոց տաճարի ճարտարապետութեան որոշակի ազդեցութեան կնիքը ... Ինչպէս բարձրաքանդակաւոր ճարտարապետական կոթող, աւերակ վիճակում էլ չի դադարում հմայել Զուարթնոցը : Նա պատկառանք է ներշնչում այն հանճարեղ կառուցողների յիշատակի նկատմամբ, որ 1300 տարի առաջ կանգնեցրին այս հոյակապ տաճարը, որպէս Հայ ճարտարապետական արուեստի նշանակալից նուաճումների փայլուն վկայական» :

Մի հանգամանք սակայն կարօտ է լուսարանութեան : ճարտարապետ Վ. Մ. Յարութիւնեանն ընդգծել է, թէ Զուարթնոցը կառուցողների բարձրաքանդակները տեղ են գտել տաճարի կամարամիջոցներում . ենթադրուած է նաեւ, թէ Յոհանն է տաճարի գլխաւոր ճարտարապետը : Այս կարծիքի հետ ճարտարապետ Ստեփան Մնացականեանը համաձայն չլինելով արձանագրել է հետեւեալը. «Նման գրոյթի անշուշտ չի կարելի համաձայնել : Զպէտք է մոռանալ, որ Զուարթնոցը կառուցուած է Դրդ Դարում, երբ տասնեակ հոյակապ տաճարներ կառուցող ճարտարապետների անունները նոյնիսկ չեն յիշատակուում, երբ նոյնիսկ տաճարի կառուցմանը ակնատես Սեբէոսը ո՛չ մի խօսք չի ասում Զուարթնոցի ճարտարապետի մասին . . . Այսպիսով ո՛չ մի հիմք չկայ ենթադրելու, որ յատկապէս Յոհանն է տաճարի ճարտարապետը . . . Հագիւ թէ կարելի լինի կասկածել, որ այնտեղ պատկերանում են ո՛չ թէ տաճարը կերտող վարպետները, այլ . . . այն անձինք, որոնք այս կամ այն կերպ օժանդակել են տաճարի շինարարութեանը» :

ճարտարապետ Ստեփան Մնացականեանի տուած բացատրութիւնները, սակայն, ոչ միայն չեն լուսարանում հարցի էութիւնը, այլ աւելի են մթաղնում : Խնդրի ճիշդ եւ արամբանական վերլուծութեան համար անհրաժեշտ են փաստական տուեալներ : Դրանց կարելորը, որ դրաւում է մեր ուշադրութիւնը, ճարտարապետական գործիքներ ձեռքերին կանդնած բարձրաքանդակ կերպարներն են, որոնք իրենց լուսիկամբ վկայում են, որ իրենք են տաճարը կերտող վարպետները եւ ո՛չ թէ «այն անձինք, որոնք այս կամ այն կերպ օժանդակել են տաճարի շինարարութեանը» : Բայց կայ աւելի ցայտուն եւ պերճասօս վկայութիւն : Դա Յոհան հայտառ մակագրութիւնն է, որը հաստատում է, թէ նա է տաճարի գլխաւոր ճարտարապետը :

Որո՞նք են սակայն Յոհանի էական առանձնաատկութիւնները: Նա մէկն է այն վաստակաւոր ճարտարապետներից, որ իր ամբողջ կեանքը նուիրել է ո՛չ միայն շինարարական արուեստին, այլև լինելով արտակարգ տաղանդով օժտուած մեծ ճարտարապետ, խորապէս զիտակցել է որ ճարտարապետական մշակոյթը Հայ ժողովրդի զեղարուեստական գաստիարակութեանը նպաստող հզօր ազդակներից մէկն է, որով իրեն նպատակ է գրել նրա ճաշակը վարդացնելու համար կառուցել նոր բովանդակութեամբ, նոր ոճով ու ձևերով եւ զեղարուեստական բարձր արուեստով ճարտարապետական մի հոյակապ կոթող, պահպանելով այն առանձնաատկութիւնները, որոնք կազմում են հնագոյն դարերի Հայ ճարտարապետութեան խոշոր նուաճումները: Ահա՛ արուեստի այն հրատապ հարցերը, որոնք ամէնից շատ յուզել են Յոհան ճարտարապետին եւ որոնց մասին նա խոր ասորումներ է ունեցել: Իր ամբողջ էութեամբ նա նուիրուել է իր վեհ խեղճ իրազորման եւ Հայ ժողովրդին աւանդ է թողել ճարտարապետական մի հրաշագեղ կոթող՝ Զուարթնոց տաճարը:

Այդ ստեղծագործութիւնը, իր զեղարուեստական նոր ոճով ու ձևերով, ո՛չ միայն բանաստեղծական է, այլև իր ամբողջական բովանդակութեամբ մեղանում առաջին հայկական ճարտարապետական յուշարձանն է, որն իրբև նոր երևոյթ նոր ուղի է հարթել եւ նպաստել Հայ ճարտարապետական մշակոյթի հետագայ զարգացմանը: Այդ տեսակէտից Զուարթնոց ունի թէ՛ պատմական եւ թէ՛ զեղարուեստական մեծ արժէք եւ իրբև նշանակալից երևոյթ հայկական ճարտարապետութեան պատմութեան մէջ պատուաւոր տեղ է զբաւում:

Գ

10-ՐԴ ԴԱՐԻ ՊԱՏԿԵՐԸ

10րդ Դար: Դա այն պատմաշրջանն է, երբ դարերի ազատագրական պայքարից յետոյ Հայաստանում, 922 թուականից, սկսում է երկարատեւ խաղաղութեան մի շրջան, որի շնորհիւ շինարար, աշխատասէր Հայ ժողովուրդը նուիրում է ստեղծագործական աշխատանքի եւ անում տնտեսական նշանակալից նուաճումներ: Այդ ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսական կեանքն ո՛չ միայն որոշ բարձրութեան է հասնում, զարգանում են քաղաքները, այլև կարճ ժամանակում առևտրական-արհեստաւորական ու արդիւնաբերութեան խոշոր կեդրոններ են գառնում Անին, Վանը, Կարսը, Դուինը, Արժնին եւ այլ տեղեր:

10րդ Դարում, Հայաստանի քաղաքների ծաղիման եւ Հայ ժողովրդի տնտեսական զարգացման պայմաններում՝ ուշադրաւ նուաճումներ են անում Հայ մշակոյթն ու արուեստները:

Հանդէս են գալիս պատմագրական փայլուն ձեռքով օժտուած պատմիչներ, որոնց շարքում առանձնատուկ տեղ են զբաւում Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցին, Թովմա Արժրուէին, Ստեփանոս Ասողիկ Տարօնցին, որոնք որպէս ժամանակաշրջանի առաջնակարգ մտաւորականներ եւ առաջաւոր մտածողներ, հարադատութեամբ պատկերել են իրենց ժամանակի քաղաքական դէպքերն ու անցքերը, արձանագրել՝ օտար թշնամիների, բռնակալների ու ճնշողների Հայաստանում կատարած աւերածութիւններն

ու կոտորածները, Հայ ժողովրդի ողբերգական ծանր ապրումները: Ահա թէ ինչո՞ւ վատտակաւոր պատմիչները աւանդ թողած պատմութիւնները, որոնք մեծ ազդեցութիւն են թողել հետագայ գրողների վրայ, մինչեւ օրս կարգացում են հետաքրքրութեամբ, եւ իրենց մի շարք էական առանձնայատկութիւններով Հայ ժողովրդի պատմական կեանքի ուսումնասիրութեան համար թանկագին աղբիւրներ են եւ անդնահատելի արժէք ունեն:

Համառօտակի անդրադառնանք այդ պատմագիրների կեանքին եւ նրանց վատտակների բովանդակութեանը:

1

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳՐԱՍԵԱՆԱԿԵՐՏՅԻ

10րդ Դարի պատմագիրների շարքում ուրոյն տեղ է զբաւում Յովհաննէս Դրասխանակերտցին, որի «Յովհաննու Կաթողիկոսի Պատմութիւն Հայոց» խորագրով մատենանի կենսագրական տեղեկութիւնները վկայում են, որ նա եղել է իր ժամանակի լուսաւոր, առաջադէմ եւ դիւանագիտական ձիրքով օժտուած վալյուն հոգեւորականներից մէկը: Ծնորհիւ իր մտաւոր լուրջ պատրաստութեան եւ վարչական կարողութեան, 897 թուականին ընտրուած է կաթողիկոս եւ ժամանակի հասարակական-քաղաքական կեանքը յուզող հրատապ հարցերն իմաստութեամբ կարգադրում: Դրա մի ցայտուն պատկերն է բիւզանդական կայսեր հետ նրա վարած բանակցութիւններն Արարները դէմ, որ համարուած է Հայ դիւանագիտութեան նրբամտութեան մի արտայայտութիւնը:

Նա պատմութիւնն սկսում է պատմական հնագոյն անցեալից եւ հասցնում մինչեւ իր օրերը: Սակայն, նրա պատմական վաստակի էական մասն են կազմում 10րդ Դարի Աքարական տիրապետութեան շրջանում Հայաստանում տեղի ունեցած դէպքերի եւ անցքերի նկարագրութիւնները:

Նշանակալից է եւ այն, որ հայրենասէր կաթողիկոսը զատուաբարում է Հայ նախարարների անմիաբանութիւնը, երկպառակութիւնները եւ կոչ է անում, որ նրանք միասնական ուժերով անողոք պայքար մղեն օտար կեղեքիչների դէմ եւ ազատուելով նրանց շահագործումներից՝ Հայաստանը կառավարեն միանգամայն անկախ եւ ինքնուրոյն իշխանութեամբ:

2

Թ Ո Վ Մ Ա Ա Ր Ծ Ր Ո Ի Ն Ի

10րդ Դարի այս վատտակաւոր պատմագիր ինքնատիպ պատմութիւնն ունի այսպիսի վերնագիր. «Թողմայի վարդապետի Արծրունայ պատմութիւն տանն Արծրունեաց», որը շարադրել է, ինչպէս կարդում ենք գրքի յառաջարանում, Արծրունեաց Տէր Գրիգորի եւ Վասպուրականի իշխանի հրամանով:

Իր պատմութիւնը Թոման սկսում է պատմական հնագոյն անցեալից՝ Ադամից, Նոյից եւ Հայկից: Այդ շրջանի մասին գրելիս նա օգտուել է ո՞չ միայն Հայ հին գրականութեան աղբիւրներից, այլ նաեւ օտարազգի պատմիչներից՝ Եւսեբիոսից, Ալիբիկանոսից եւ Հերոդոտից, որից քաղել է պարսկական պատմութեան այն նիւթերը, որոնք սերտ կապ ունեն Հայ ժողովրդի

կեանքի հետ : Նշանակալից է եւ այն, որ նա իր պատմութեան մէջ արձանագրել է այնպիսի նորութիւններ, որոնց չեն յիշատակել իրենից առաջ արդ մատենագիրները :

Նրա պատմութեան ուշագրաւ մասն են կազմում նաեւ մետական, ասորական եւ պարսկական պետութիւնների անկման, ինչպէս նաեւ մակեդոնական արշաւանքներին ու Արշակունեաց պետութեան նուիրած տողերը : Նա խոր վշտով արձանագրել է Հայաստանում տիրող ներքին անմխարանութեան եւ երկպառակութիւնների պատկերը :

Պատմութեան արժէքաւոր մասը կազմում է նաեւ Բուզա Արար Ոստիկանի կոիւնների ու բարբարոսութիւնների արձանագրութիւնը Վասպուրականում : Թանկագին տեղեկութիւններ են նաեւ Գաղիկ Արծրունու որդի՝ Գրիգոր Դերենիկի գործունէութեան, Աղթամարայ նշանաւոր վանքի, Ոստան, Վան եւ Արտամեա կատարած շինութիւնների նկարագրութիւնները : Առ հասարակ, Թովմայի պատմութիւնը կարգացում է առանձին հետաքրքրութեամբ . շարադրւած է հայրենասիրական անկեղծ զգացումներով եւ պատկերաւոր նկարագրութիւններով :

ՍՏԵՓԱՆՈՍ ԱՍՈՂԻԿ ՏԱՐՈՆԵՑԻ

Պատմագրի մասին կենսագրական տեղեկութիւնները շատ քիչ են, բայց այսքանը յայտնի է, որ նա ապրել է 10րդ Դարի երկրորդ կէսին եւ 11րդ Դարի սկիզբները :

Իր գորաշրջանում նա հռչակուել է որպէս հմուտ գիտնական-աստուածաբան :

Նրա ազգանունը վկայում է, որ ծնուել է Տարօնում, իսկ մի քանի բանասէրներ նրա Ասողիկ մականունը հիմք ունենալով ենթադրում են, որ նա եղել է տաղասաց-երածիշտ . իսկ Մանուկ Աբեղեանի կարծիքով՝ նա փայլել է որպէս ասմունքի վարպետ, լաւ արտասանող :

Նրա պատմութիւնը բաղկացած է երեք մասից : Առաջին մասն ընդօրինակութիւն է Մովսէս Խորենացուց, իսկ երկրորդն՝ Արար ամիրայպետների գործունէութիւնն է : Ամենաուշագրաւ մասը, սակայն, երրորդ «հատուած»ն է, ուր ցայտուն դոյներով պատկերանում են իր ժամանակի քաղաքական-հասարակական կեանքի դէպքերն ու անցքերը : Այդ մասում արձանագրել է Աշոտ Առաջինի թագաւորութիւնից մինչեւ Գաղիկ Առաջինի ժամանակի պատմութիւնը՝ մինչեւ 1004 թուականը : Այս մասը շարադրել է ժամանակի «տիեզերափայլ եւ մեծաշնորհ» Սարգիս կաթողիկոսի հրամանով :



Այս վաստակաւոր պատմագիրների մատեանները 10րդ Դարի Հայ ժողովրդի կեանքի պատմութեան համար գանձարաններ են այն տեսակէտից, որ նրանք կորստից ընդմիշտ փրկել են Հայոց պատմութեան շատ արժէքաւոր էջերը :

Նրանց արժէքաւոր գործերը Հայ հին մատենագրութեան պատմութեան մէջ յայտնի են նաեւ իրենց լեզուական ու ոճական մշակոյթով : Այնտեղ չէք գտնում երկար ու ճոռած արտայայտութիւններ, զարգարուն նը-

կարագրութիւններ, այլ միմիայն պատմական գէպերի, անցքերի ու եղելութիւնների յատակ, պարզ նկարագրութիւններ:

Ընդգծենք սակայն որ Հայ պատմագրութեամբ չեն սահմանափակուած 10րդ Գարի մատենագրութեան ու արուեստի էջերը:

10րդ Գարի Հայ մշակոյթի պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ է զբաւում նաև բանաստեղծական գրականութիւնը, որի ամենափայլուն ու պայծառ գէժքն է Գրիգոր Նարեկացին, Նարեկայ վանքի ճգնաւոր վարդապետը որի գերը շատ մեծ է Հայ գեղարուեստական գրականութեան զարգացման պատմութեան մէջ: Նրա «Մատենան Ողբերգութեան» պոէմը և քնարական տաղերը միջնադարի Հայ գրականութեան մէջ մի նոր էջ բացին և իրենց ուշադրատեղական պայծառ դոյներով, նկարչական պատկերաւորութեամբ ու ինքնատիւ կառուցուածքով Հայ բանաստեղծական արուեստի զահարներ են:

10րդ Գարի Հայ մշակոյթի պատմութեան զարդն է կազմում նաև ճարտարապետական արուեստը, որ առանձնապէս զարգանում և նշանակալից նուաճումներ է անում Անիում և Վասպուրականում: Այդ պատմաշրջանի Հայ ժողովրդի գեղարուեստական ստեղծագործութեան հոյակապ կոթողների ու յուշարձանների նոր ոճերի ու ձևերի բազմազանութիւնն ու բանաստեղծական գեղեցկութիւնները վկայում են ճարտարապետական մշակոյթի առաջնակարգ նուաճումների ու վերելքի մասին:

Ովքե՞ր են, 10րդ Գարի այն տաղանդաւոր ճարտարապետները, որոնք իրենց կառուցած հոյակապ յուշարձաններով հարստացրել են Հայ ճարտարապետական արուեստի դանձարանը:

**ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ**

(Շար. 1)

